



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՇՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳՅ ԼՈՒՈՒ ՃԱՐԳ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
ՌՆՕ (+374) 91190324
Էլ. փոստ info_alaverdi@earthus.am
anushhevoyan@rambler.ru

Lon, Alaverdi,
Zoravar Andranik str.8/1, 403
Tel. (+374) 91190324
E-mail info_alaverdi@earthus.am
anushhevoyan@rambler.ru

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ
Տնօրեն Լուսինե Մեջլումյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Մեջլումյան.

Հիմք ընդունելով ՀՀ Մահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Ալավերդու Օրինուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին

1. Ի՞նչ արտադրական հզորությունով է աշխատում «ACP» Ընկերությունը 2016 –ին եւ ի՞նչ արտադրանք է տալիս
2. Ինչքա՞ն է եղել արտադրության ծավալը մինչեւ 2016թ. եւ ի՞նչ փոփոխություններ է կրել այն
3. Խնդրում եմ տրամադրել նոր նախաձեռնանքի և ծխնելույզի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով ընկերության պատվերով «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության մասնագետների կողմից իրականացվող հետազոտող գազերի բաղադրության և աերոդինամիկական պարամետրերի ամենամյա մոնիտորինգի տվյալները:
4. Ի՞նչ աշխատանքներ են կատարվում օդային ավազան արտանետումների բացառական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու եւ չկազմակերպված / կոնվերտորային/ արտանետումները վերահսկելու եւ նվազեցնելու ուղղությամբ:

Կանխավ շնորհակալություն:

Ալավերդու Օրինուս կենտրոնի համակարգող

Անուշ Էվոյան

15.03.2016թ.